Արձանագրություն N 2

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հսկողական գործառույթների կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորման ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/65» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

19.01.2018թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Խոջայան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գրիգորյան /գնահատող/, Ա. Այվազյան /գնահատող/, Ա. Սաֆարյան /բացող/, Տ. Վարդանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/65» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ռ. Խոջայան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի հունվարի 19-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/65» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Ռ. Խոջայան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Լոկատոր» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3.Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Ռ. Խոջայան)

3.1 Գնանշման հարցում ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հսկողական գործառույթների կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորման ձեռքբերման				
Մասնակցի անվանումը	Նախա-հաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
«Լոկատոր» ՓԲԸ	10120000	7920000	1854000	9504000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ռ. Խոջայան)

4.1 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Լոկատոր» ՓԲԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Ռ. Խոջայան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/65» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Լոկատոր» ՓԲԸ-ն, որպես բավարար գնահատված միակ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցելու մասին

(Ռ. Խոջայան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ռ. Խոջայան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 26.01.2018թ. ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ռ. Խոջայան

Անդամներ՝ ---------- Ա. Գրիգորյան

---------- Ա. Այվազյան

---------- Ա. Սաֆարյան

---------- Տ. Վարդանյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան